

ՌՈՔԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի
կրթության կառավարման և պլանավորման
ամբիոնի վարիչ, դոցենտ, բանասիրական
գիտությունների թեկնածու

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հետազոտական համալսարանների գիտահետազոտական գործունեության արդյունավետությունն ու շարունակականությունն ապահովելու պարտադիր գործընթացներից է գիտական արդյունքների պարբերական գնահատումը և չափելի ցուցանիշների կիրառումը: Այս տեսանկյունից կարևոր է, որ հետազոտական համալսարանները մշակեն և սահմանեն գործունեության առանցքային ցուցանիշներ (ԳԱՅ-եր)՝ գիտահետազոտական աշխատանքների կատարման տարբեր փուլերում իրականացրած աշխատանքների վերջնարդյունքները չափելու և գնահատելու նպատակով: ԳԱՅ-երի մշակումն ու գործառումը ցանկացած կազմակերպության ռազմավարական կառավարման գործընթացի բաղկացուցիչներից է, որոնց միջոցով համալսարանների կոլեգիալ մարմինները, ղեկավար կազմը, ռազմավարություն ու քաղաքականություն մշակողները և կառավարման գործընթացների իրականացման այլ պատասխանատուները կարողանում են չափել ու գնահատել թիրախային ոլորտներում (հետազոտական համալսարանների դեպքում՝ մասնավորապես գիտական հետազոտության) արձանագրած հաջողություններն ու արդյունքները: Հաշվի առնելով նշվածը՝ սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել և առաջարկել հետազոտական համալսարանների գիտահետազոտական գործունեության արդյունավետության ցուցանիշները գիտելիքահենք տնտեսության զարգացման համատեքստում:

Հիմնարաներ- հետազոտական համալսարաններ, գիտահետազոտական գործունեություն, գործունեության արդյունավետության ցուցանիշներ, կատարողականի գնահատում:

Հետազոտական համալսարանները ԳԱՅ-երի կիրառմամբ կարողանում են գնահատել և չափելի դարձնել իրենց գիտահետազոտական գործունեության արդյունքները, արձանագրված ձեռքբերումներն ու բացթողումները: ԳԱՅ-երը փոփոխականներ են, որոնք չափում են տվյալ ոլորտի գործունեության արդյունավետությունը կամ արտադրողականությունը: ԳԱՅ-երի միջոցով կարելի է գնահատել, օրինակ, թե գիտահետազոտական կամ այլ տիպի համալսարանի առանցքային ոլորտների պատասխանատուները որքանով են կարողացել տվյալ ժամանակահատվածում ապահովել սահմանված վերջնարդյունքները, որքանով է նրանց գործունեությունը համապատասխանել համալսարանի ռազմավարական առաջնահերթություններին, նպատակներին ու խնդիրներին, կազմակերպական մշակույթին և համատեքստին, ինչպիսի կարողություններ են նրանք զարգացրել այդ ժամանակահատվածում, անձնական և մասնագիտական ինչպիսի որակներ ու վարք են դրսևորել աշխատանքային գործունեության ընթացքում և այնպիսի այլ ցուցանիշներ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի կերպով ազդեցություն ունենալ համալսարանի գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման վրա: ԳԱՅ-երը կատարողականի գնահատման չափումներ են, որոնց արդյունքների հիման վրա համալսարանի

ղեկավար կազմը կարող է վերանայել աշխատակիցների գնահատման և պարզաևարման համակարգերը: Հետազոտական համալսարանների ընդհանուր կատարողականի, ներառյալ գիտահետազոտական ոլորտի արդյունավետ չափումն ու գնահատումը ենթադրում են նաև, որ այդ գործընթացների իրականացման պատասխանատուները ԳԱՅ-երը դիտարկում են որպես իրենց շահակիցներին հաշվետվողականության մեխանիզմ, որը հետագայում ուղեցույց և հիմք է հանդիսանում որոշումների կայացման համար:

Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների համաձայն՝ համընդհանուր կիրառություն ունեցող ԳԱՅ-երը նմանատիպ այլ ցուցանիշների հետ համադրական վերլուծության են ենթարկվում: ԳԱՅ-երի ամբողջական պատկերն ունենալու, և ազգային մակարդակում ստույգ տեղեկություն ու տվյալներ ստանալու նպատակով, ցանկալի է, որ հետազոտական համալսարանների հետազոտողների շրջանում իրականացվեն հարցումներ, որոնց արդյունքների ուսումնասիրությունը և վերլուծությունը պետք է իրականացվեն գիտական հետազոտության ոլորտում մեծ փորձ ունեցող համապատասխան փորձագետների կողմից:

Հետազոտական համալսարանները մեծ ուշադրություն են դարձնում գիտական անձնա-

www.aradadailyjournal.com

կազմի կատարողականի արդյունավետության չափմանը, գնահատմանը և բարձրացմանը՝ նրանց գործունեության որակական և քանակական ցուցանիշներին: Վերջիններս չափվում և գնահատվում են գիտական անձնակազմի գիտահետազոտական աշխատանքներով, որոնք կարող են մեծապես ազդել գիտելիքահենք հասարակության զարգացման վրա և էական նշանակություն ունենալ սոցիալ-տնտեսական ու տեխնոլոգիական մարտահրավերների հաղթահարման գործընթացներում:

ՀՀ-ում պետական և ինստիտուցիոնալ մակարդակներում գիտահետազոտական ոլորտում սահմանված ԳԱՅ-երի վերլուծության արդյունքները լիարժեքորեն չեն կապվում պետական առաջնահերթությունների հետ: Ավելին, այդ ԳԱՅ-երի վերաբերյալ հանրային քննարկումները խիստ սահմանափակ են, և հաշվետվողականության ապահովման տեսանկյունից գիտական ու ակադեմիական հանրույթն ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում իրականացված գիտական հետազոտության, արդյունքների, այդ ոլորտի զարգացման շարժընթացի ու միտումների մասին մեծ մասամբ լիարժեք տեղեկություն չունի: Չարգացած երկրներում հետազոտական խոշոր կազմակերպություններն իրենց գիտահետազոտական գործունեությունը չափելու և գնահատելու նպատակով՝ կիրառում են մի շարք այնպիսի ԳԱՅ-եր, ինչպիսիք են՝ հրատարակված աշխատանքների, պատենտների և դրանց արված հղումների թիվը: Այդպիսի երկրներում ԳԱՅ-երը սահմանվում են տարբեր նպատակների, օրինակ՝ ազգային մակարդակում առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ որակապես նոր մտեցումների առաջարկման համար: Սա ենթադրում է, որ ԳԱՅ-երը սահմանելիս՝ կազմակերպությունները հաշվի են առնում ինստիտուցիոնալ և պետական (ազգային) առաջնահերթությունները՝ դրանց հիման վրա որոշելով, թե ԳԱՅ-երը որ նպատակների իրականացումը պետք է չափեն:

Չարգացող երկրներում հետազոտողները հիմնականում կենտրոնանում են ոչ այնքան տվյալ երկրի կարիքների բավարարման, որքան գիտահետազոտական հրատարակված աշխատանքներ ունենալու խնդրի վրա³: Չարգացող մի շարք երկրներում գիտահետազոտական ոլորտը ֆինանսավորող գործակալությունները կենտրոնանում են, օրինակ, սոցիալական բարեկեցության մակարդակի բարձրացման, ազգային մրցակցային դաշտի ամրապնդման և սոցիալ-տնտեսական այլ առանցքային խնդիրների լուծման վրա⁴:

Սի շարք հետազոտողներ բավարար ներուժ կամ հնարավորություն չունեն իրենց գիտահետազոտական աշխատանքների արդյունքները հրատարակելու այնպիսի ամսագրերում, որտեղ հրատարակվող գիտահետազոտական աշխատանքնե-

րի ազդեցությունը գնահատվում է միջազգային վիճակագրական ինստիտուտի (International Statistical Institute) կողմից: Որոշ հետազոտողների կարծիքով՝ ֆինանսավորող գործակալությունները չեն սահմանում այնպիսի քաղաքականություններ ու գործընթացներ, որոնցով կարելի է գնահատել հետազոտության ազդեցությունը, փոխարենը՝ նախընտրում են գիտական հետազոտության ոլորտի ԳԱՅ-երը չափել գիտաժողովների նյութերի և ամսագրերում տպագրված գիտահետազոտական աշխատանքների, հետազոտական նախատիպերի (prototypes) և առևտրայնացված արտադրանքների միջոցով երկրորդական նշանակություն տալով հետազոտության շնորհիվ պետությանը տրված օգուտների չափմանը կամ գնահատմանը: Հատկանշական է նաև՝ գիտական հանրույթում ընդունված է այն համընդհանուր կարծիքը, ըստ որի՝ գիտահետազոտական ոլորտում, այդ թվում՝ հետազոտական ծրագրերում ընդգրկվածության շնորհիվ ձեռք բերված համբավը և պաշտոնական առաջնահարգումն ավելի քիչ ազդեցություն ունեն հասարակության և տնտեսության զարգացման վրա, քան գիտահետազոտական արդյունքները: Հետևապես հետազոտողներն առավել մեծ ջանքեր են ներդնում հրապարակումների, քան գիտահետազոտական այլ տեսակի արդյունքների ապահովման ուղղությամբ: Սիևնույն ժամանակ, հետազոտական արդյունքները /հրապարակումներն ավելի ծախսատար են և ներդրումների վերադարձելիության տեսանկյունից՝ պետության համար ավելի քիչ օգտավետ:

Գիտական հետազոտության ոլորտում ԳԱՅ-երի մշակման և գործառնման գործընթացները ՀՀ բուհերի պարագայում դեռևս կան ոչ լիարժեք են և արդյունավետ, կան, առհասարակ, բացակայում են: Ընդ որում, նշված խնդիրը վերաբերում է համալսարանների գործունեության, ոչ միայն գիտահետազոտական, այլ նաև այլ ոլորտներին: Ավելին, գիտահետազոտական գործունեության արդյունքների որակի գնահատման գործիքների (օրինակ՝ ազգային կամ միջազգային փորձագիտական գնահատում անցած հրապարակումներ, տեղական ու միջազգային դրամաշնորհներ, հետազոտողների թիվ, ազդեցության գործոններ և այլն) մասնակի կամ անարդյունավետ կիրառումը նույնպես պայմանավորված է համապատասխան ԳԱՅ-երի բացակայությամբ:

Հետազոտական համալսարանների գիտահետազոտական գործունեության ոլորտում սահմանված ԳԱՅ-երի (քանակական և որակական) համեմատական վերլուծությունը (ըստ տարիների) ՀՀ բուհերին հնարավորություն կընձեռի՝

- բացահայտելու գիտահետազոտական գործունեության ոլորտում առկա համակարգային հիմնախնդիրներն ու բացթողումները,

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

• բացահայտված խնդիրների հիման վրա մշակել բարելավման երկարաժամկետ, միջնաժամկետ պլաններ,

• խթանելու միջազգային բարձր վարկանիշ ունեցող հանդեսներում և ազդեցության բարձր գործակից ունեցող մասնագիտական ամսագրերում գիտական հրապարակումների, միջազգային գիտաժողովներում համալսարանների գիտական անձնակազմի ներգրավվածության թվի բարձրացումը, ինչպես նաև այդ հրապարակումների տեսանկյունից աստիճանը,

• մշակելու և իրականացնելու գիտահետազոտական կազմակերպությունների ռազմավարություններ, նոր գիտական ուղղությունների ու դպրոցների ստեղծման քաղաքականություններ, իսկ դրանց առկայության դեպքում՝ զարգացնելու դրանք,

• հստակեցնելու կրթական ու հետազոտական ծրագրերում գիտահետազոտական բաղադրիչի արտացոլումը,

• նպաստելու գիտական հետազոտության ոլորտի միջազգայնացմանն ու եվրոպական չափանիշներին դրանց առավելագույն համապատասխանեցմանը,

• սերտացնելու գիտական հետազոտության ոլորտում սահմանված ԳԱՅ-երի և այդ ոլորտում համալսարանների մշակած ռազմավարությունների ու քաղաքականությունների կապը,

• ամրապնդելու կրթության և հետազոտության գործընթացների փոխադարձ կապը (հատկապես հաշվի առնելով ՀՀ բուհերում այդ կապի ստեղծման համար անհրաժեշտ ոչ բավարար կառուցվածքային հենքը),

• ընդլայնելու գիտահետազոտական գործունեությունը՝ նպատակաուղղված աշխատանքներ իրականացնելով գերազանցության կենտրոնների ստեղծման, ինչպես նաև ՀՀ-ից դուրս գործող համալսարանների ու գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ներդրումների ծավալի մեծացման ուղղությամբ:

Գիտական հետազոտության ոլորտում ԳԱՅ-երը կարելի է դասակարգել ըստ որակական և քանակական ցուցանիշների: Որակական ցուցանիշներով չափվում են հետազոտական արդյունքների որակը և հանրային օգուտը, քանակական ցուցանիշներով՝ անմիջականորեն ստացված արդյունքները (ելքերը), որոնք արտահայտվում են հրապարակումների, պատենտների, նախատիպերի, ինչպես նաև նոր արտադրանքների, գործընթացների ու ծառայությունների թվով: Անհրաժեշտ է նշել, որ հրատարակված հետազոտական արդյունքը պետք է պարունակի նորարարություն, իսկ պատենտը ցույց է տալիս, որ նորարարությունը շուկայում իրացվելու ներուժ ունի: Հրապարակումները և դրանց արված հղումները դիտարկվում են որպես

հետազոտական արտադրողականության և գիտահետազոտական արդյունքների ազդեցությունն ապահովող ցուցանիշ: ԳԱՅ-եր սահմանելիս հետազոտական համալսարանները հիմնականում գնահատում են երեք ոլորտներ՝ գիտական հետազոտություն, գիտական անձնակազմի ֆինանսական խրախուսում և գիտելիքի փոխանցում: Գիտահետազոտական ոլորտում որպես ԳԱՅ-եր կարող են սահմանվել՝

• **գիտահետազոտական ակտիվությունը**, որոնցից են արդյունավետության և արտադրողականության ցուցանիշները (հրապարակումները, պատենտները կամ հեղինակային իրավունքով պաշտպանվող այլ օբյեկտները),

• **գիտական անձնակազմի ֆինանսական խրախուսման ցուցանիշները**, որոնցից են՝ գիտական անձնակազմի համար հատկացված պետական, ծրագրային հետազոտությունների և թեմատիկ ֆինանսավորման ցուցանիշները, գիտական անձնակազմին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարները, գիտական շտեմարաններում կամ ազդեցության բարձր գործակից ունեցող ամսագրերում գիտահետազոտական աշխատանքների հրատարակման ֆինանսավորման ցուցանիշները, հրապարակումներին տրամադրված ֆինանսական աջակցության ցուցանիշները,

• **գիտահետազոտական արդյունքների ազդեցությունը և միջազգային տեսանկյունից**, որոնցից են՝ հետազոտության արդյունքների ազդեցությունը սոցիալ-տնտեսական ոլորտի զարգացման վրա, գիտահետազոտական ոլորտում գիտական անձնակազմի ունեցած ձեռքբերումների որակը, հետազոտական համալսարանների և գիտահետազոտողների համբավը (մրցանակներ, տիտղոսներ), հեղինակի անդամակցությունը խմբագրական կազմերին, կազմակերպած գիտաժողովների և աշխատաժողովների թիվը:

Ըստ ՀՀ բուհերի գործունեության ընդհանրական վերլուծության արդյունքների՝ ԳԱՅ-երի մշակման, դրանց միջոցով գործունեության արդյունքների չափման ու գնահատման փորձն ինստիտուցիոնալ մակարդակում առկա է, սակայն նշվածը համատարած ու համակարգային բնույթ չի կրում: Հաշվի առնելով ՀՀ բուհերի գիտահետազոտական գործունեության ոլորտում ԳԱՅ-երի սահմանման, դրանց կիրառմամբ համեմատական վերլուծությունների կատարման և վերլուծության արդյունքների հիման վրա բարելավման արդյունավետ ուղիների մշակման կարևորությունը՝ գիտության և հետազոտության ոլորտներում ՀՀ բուհերի ծավալած գործունեությունը կարելի է չափել հետազոտական համալսարանների որակական և քանակական հետևյալ ԳԱՅ-երի օրինակով.

www.ardadailyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

<p>ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ</p>	<p>ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ</p>
<p>ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐ</p>	
<p>Գիտական ներուժի և գիտահետազոտական կարողությունների զարգացման ցուցանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • գիտական անձնակազմի թիվը և հարաբերակցությունը հիմնական դասախոսների թվին • գիտական աստիճաններ ունեցողների թիվը • գիտական կոչումներ ունեցողների թիվը • գիտատեխնիկական աշխատանքներ ու մշակումներ կատարող աշխատողների թվաքանակը՝ ըստ սեռի, տարիքային խմբերի, կրթական մակարդակի, գիտական աստիճանի, գիտական կոչման • գիտահետազոտական աշխատանքներում/ծրագրերում ներգրավված գիտական անձնակազմի թիվը, հաշվեկշիռը և պետական ֆինանսավորման ծավալը • ստենախոսությունների հրատարակային պաշտպանությունների և գիտական աստիճաններ ստացած հետազոտողների ցուցանիշներ • դասախոսների և գիտական աստիճան ստացածների թվային հարաբերակցությունը • ՀՀ ՈԱԸ-ի 8-րդ մակարդակում ուսումնառողների (ասպիրանտներ, հայցորդներ) և հիմնական դասախոսների թվային հարաբերակցությունը • գիտական մրցույթներում, միջազգային օլիմպիադաներում, ամառային/ձմեռային դպրոցներում, գիտաուսումնական փոխանակության ու շարժունության ծրագրերում գիտական անձնակազմի ներգրավվածության ցուցանիշներ • ուսանողական գիտական կամ երիտասարդ գիտնականների ընկերությունների գործունեության տարեկան ցուցանիշներ
<p>Գիտական արդյունքների ստեղծման, հրատարակման ու տարածման ցուցանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • գիտական հրատարակումների թիվը՝ ըստ ուղղությունների • տարվա կտրվածքով համալսարանում կազմակերպված գիտաժողովների թիվը • ՀՀ-ում և տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում կազմակերպված գիտաժողովներին ներկայացված զեկուցումների և տպագրված նյութերի թիվը • հրատարակված գիտահետազոտական արդյունքների (գիտամեթոդական աշխատանքներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, դասագրքեր, (կոլեկտիվ) մենագրություններ և այլ հետազոտական արդյունքներ) թիվը (ներառյալ մենագրություն-հոդված հարաբերակցությունը) • մասնագիտական կամ գրախոսվող ամսագրերում հրատարակված հոդվածների թիվը • գիտական անձնակազմի թիվ - գիտական հրատարակումների թիվ հարաբերակցությունը • գրանցված պատենտների թիվը • անդամակցությունը համաշխարհային գիտական շտեմարաններին ու հետազոտական վճարովի աղբյուրների և ռեսուրսների բաժանորդագրության ծավալները • մասնագիտական կամ գրախոսվող ամսագրերի/հանդեսների խմբագրական կազմերին անդամակցության ցուցանիշներ (գլխավոր խմբագիրների, խմբագիրների տեղակալների կամ ուղորտային խմբագիրների թիվը) • գրախոսված ամսագրերի ազդեցության գործակիցը • հրատարակված գրքերի թիվը • խմբագրված գրքերի թիվը • հանրահասանելի և բաց մատչելիության գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հասանելիության ցուցանիշներ

www.ardaradutyunjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

	<p>դրանց համամասնությունն ընդհանուր հրատարակված աշխատանքների թվում</p> <ul style="list-style-type: none"> • գիտաժողովների հրատարակված նյութերի թիվը
	<ul style="list-style-type: none"> • հետազոտությանը հատկացված ֆինանսավորման ծավալը (ֆինանսական մուտքերի հաշվեկշիռն ընդհանուր բյուջեում՝ ըստ աղբյուրների (պետական մուտքեր, արտաբյուջետային մուտքեր, միջազգային դրամաշնորհային ֆոնդեր, այլ ներդրումներ) • պետական ֆինանսավորմամբ հետազոտական ծրագրերում ընդգրկված դասախոսների/գիտական անձնակազմի թիվը և հաշվեկշիռը, մեկ մասնակցին ընկնող պետական ֆինանսավորման ծավալը • երիտասարդ գիտահետազոտողների հետազոտությունների աջակցության ծրագրերի շրջանակներում ֆինանսավորման ցուցանիշներ • հետազոտական դրամաշնորհների թիվը • երրորդ կողմ հանդիսացող կառույցների կողմից ֆինանսավորված գիտահետազոտական ծրագրերի թիվը, հաշվեկշիռը և ծրագրերի տևողությունը
<p>Գիտահետազոտական ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի բարելավման ցուցանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • գիտահետազոտական աշխատանքների կատարման համար նախատեսված ենթակառուցվածքների (ներառյալ մասնագիտացված կառույցների, գիտական գրադարանների, լաբորատորիաների, գիտահետազոտական կենտրոնների, գիտական թանգարանների) թիվը, դրանց բարելավման ցուցանիշները • գիտահետազոտական ֆիզիկական և վիրտուալ միջավայրներն ապահովող գիտատեխնիկական ու նյութատեխնիկական ռեսուրսների օգտագործման ցուցանիշներ
<p>ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՅԱՆԻՇՆԵՐ</p>	
<p>Գիտահետազոտական արդյունքների տեսանելիության ցուցանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • գիտական անձնակազմի տիտղոսների, կոչումների և մրցանակների թիվը՝ ըստ շնորհած կառույցի (ներառյալ հետազոտական համալսարանների, ազգային ու միջազգային ակադեմիաների, կազմակերպությունների, հիմնադրամների և այլ կառույցների կողմից) • ազգային և միջազգային մակարդակներում գիտական գործունեության վարկանշավորման և տեսանելիության ցուցանիշներ • հղումների թիվը (հրատարակված աշխատանքներին արված հղումների և դրանց հաճախականության ցուցանիշներ)
<p>Գիտական ներուժի և գիտահետազոտական կարողությունների զարգացման ցուցանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • համալսարանում գործող մասնագիտական խորհուրդներն ու մասնագիտությունները, պաշտպանությունների թիվը • մագիստրոսական կրթական աստիճանում ուսումնառողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման ցուցանիշներ • հետբուհական կրթական աստիճանում ուսումնառողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման ցուցանիշներ • երիտասարդ գիտնականների ձեռքբերումների ցուցանիշներ (օրինակ՝ երիտասարդ գիտնականների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցառումների, գիտական արդյունքներին կատարված հղումների թիվը, նրանց կատարողականի որակական ցուցանիշներ) • կրտսեր հետազոտողների համամասնության ցուցանիշներ (փոխանակման ծրագրերում ընդգրկվածության ցուցանիշներ, հատուկ կարիքներ ունեցող, սոցիալական խոցելի խմբերին

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

	<p>սլատկանող, փոքրամասնություն հանդիսացող, ինչպես նաև այլ հետազոտական կառույցներից ու զարգացող երկրներից եկած հետազոտողների ցուցանիշներ)</p>
<p>Համագործակցության ցուցանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • միջազգային գիտական դրամաշնորհային ծրագրերի ղեկավարների և մասնակիցների թիվը, հաշվեկշիռը • տարածաշրջանային և միջազգային գիտաժողովներին մասնակիցների թիվը • արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը, հաշվեկշիռը • ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում կազմակերպված գիտական միջոցառումների հաշվեկշիռն ու տևողությունը (օրինակ՝ այլ կառույցների հետ համատեղ կազմակերպված գիտաժողովներ, գիտահետազոտական ծրագրեր, գործընկերային գնահատումներ և այլն) • գիտական հանրույթին և մասնագիտական ցանցին (ներառյալ մասնագիտական ակադեմիական և գիտահետազոտական ընկերակցություններ, մասնագիտական ու փորձագիտական հանձնախմբեր, գիտական խորհուրդներ) անդամակցության ցուցանիշներ • հանրության համար կազմակերպված գիտական ու մասնագիտական միջոցառումների ցուցանիշներ (օրինակ՝ հանրային դասախոսություններ և ընթերցումներ, լրատվական և սոցիալական ցանցերում գիտահետազոտական արդյունքների ներկայացումներ) • ուսումնառողների հետ համագործակցության ցուցանիշներ (համահեղինակությամբ կամ համատեղ գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում հրատարակված գիտական արդյունքներ) • հետազոտական աշխատանքներում օգտագործվող SՀS-ների թիվը և հաշվեկշիռը, SՀS-ների թիվ - մասնակից հարաբերակցությունը
<p>Կրթական գործընթացներում գիտական արդյունքների ներդրման ցուցանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • հետազոտության և կրթության կապի ապահովմանն ու ամրապնդմանն ուղղված ինստիտուցիոնալ քաղաքականության, դրանից բխող կանոնակարգերի և ընթացակարգերի (վերա)մշակման և վերանայման ցուցանիշներ • ՊԴ- կազմի բեռնվածության մեջ հետազոտական բաղադրիչի արտացոլման ցուցանիշներ • կրթական և հետազոտական ծրագրերում ՊԴ- կազմի հետազոտական գործունեության իրականացման և գնահատման ցուցանիշներ • հետազոտողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման մեխանիզմների (վերա)մշակման և բարելավման ցուցանիշներ • գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված ենթակառուցվածքների բարելավման ցուցանիշներ • հրատարակված գիտական արդյունքների ազդեցությունը տնտեսության վրա (գնահատման ցուցանիշներ)

www.ardaradutyjournal.com

Հետազոտական համալսարանների գիտահետազոտական գործունեությունը կարելի է սահմանել որպես կրթական գործունեության կարևոր բաղադրիչ, որը ենթադրում է ՊԴ- կազմի ներգրավվածությունը համալսարանի գիտահետազոտական գործընթացներում: Բազմաթիվ հետազոտություններ են կատարվել համալսարանների գիտահետազոտական գործունեության արդյունավետության

վրա ազդող գործոնները և ԳԱՏ-երն ուսումնասիրելու ուղղությամբ: Գիտական հետազոտության արդյունավետությունը չափվում է գիտական արդյունքի որակով, որի միջոցով հետազոտության ընթացքում կուտակված ու ստեղծված գիտելիքը կարելի է փոխանցել համալսարանների շահակիցներին և այն դարձնել տեսանելի հանրության համար:

Մասնագիտական գրականության մեջ քննարկվում են գիտական հետազոտության արդյունավետությունը չափող տարբեր գործիքներ և չափումների տարբեր տեսակներ, ինչպես նաև կիրառվում են վարկանշավորման համակարգեր: Համաշխարհային համալսարանների ակադեմիական դասակարգման վարկանշային աղյուսակով (Academic Ranking of World Universities (ARWU)) նախատեսված են գիտական անձնակազմի գիտահետազոտական աշխատանքների որակի ցուցանիշներ ու արդյունքների միջազգային ճանաչում, ըստ որոնց՝ Նորբեյան մրցանակ ու մեդալներ և գիտության ոլորտում մեծ ներդրումներ ունեցող անձանց թիվը համաշխարհային վարկանշավորման ոլորտում դիտարկվում է որպես համալսարանների կատարողականի չափման ցուցանիշ:

Հիմնվելով էմպիրիկ ուսումնասիրությունների և տվյալների վրա՝ կարելի է եզրակացնել, որ ԳԱՅ-երի՝ որպես հետազոտական համալսարանների գործունեության արդյունավետության գնահատման գործիքի կիրառումն օժանդակում է հետազոտական համալսարանների տեսլականի և առաքելության վրա հիմնված ռազմավարության արդյունավետ իրականացմանը: ԳԱՅ-երը կարող են արտացոլել հետազոտական համալսարանների առաջնահերթությունների փոփոխականությունը և մատնանշել այդ համատեքստում առաջացող ռիսկերն ու խնդիրները, թիրախավորել դրանց լուծման ուղիները: Այս փոփոխությունների հարացույցում,

հիմնվելով համալսարանների արտաքին միջավայրի, ներառյալ աշխատաշուկայի, ինչպես նաև ներքին ու արտաքին շահակիցների փոփոխումն պահանջներից, կարող են փոփոխվել նաև հետազոտական համալսարանների գործունեության արդյունքները: Հետևապես, ԳԱՅ-երը պետք է բավականաչափ ճկուն լինեն, որպեսզի ժամանակին և համապատասխան կերպով արձագանքեն միջավայրի փոփոխություններին: Դա ենթադրում է, որ հետազոտական համալսարանները հավաքագրված տվյալներն ու դրանց վերլուծությունից դուրս բերված արդյունքները կարող են օգտագործել հետազոտական համալսարանների գործունեության շարունակական բարելավման համար: Հետազոտական համալսարանների գիտահետազոտական ոլորտում սահմանվող ԳԱՅ-երն օժանդակում են համալսարաններին թիրախավորելու իրենց գիտական ներուժի և գիտահետազոտական կարողությունների զարգացումը, բարելավելու գիտական անձնակազմի խրախուսման համակարգերը, համարելու գիտահետազոտական ենթակառուցվածքներն ու նյութատեխնիկական բազան, ընդլայնելու իրենց համագործակցային շրջանակը, ստեղծելու գիտական նոր արդյունքներ և դրանք ծառայեցնելու սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանն ու գիտելիքահենք հասարակության զարգացմանը:

¹ Տե՛ս, Ricci L. The Impact of Performance Management System Characteristics on Perceived Effectiveness of the System and Engagement. Master's Theses. San Jose State University, 2016.

² Տե՛ս, Liebowitz, J. and Suen, C.Y. Developing Knowledge Management Metrics for Measuring Intellectual Capital. Journal of Intellectual Capital, 2000, 1(1): pp. 54-67.

³ Տե՛ս, նույն տեղում

⁴ Տե՛ս, նույն տեղում

⁵ Liebowitz & Suen 2000, Numprasertchai & Igel 2004

⁶ Liebowitz & Suen 2000, Numprasertchai & Igel 2004

⁷ Տե՛ս, նույն տեղում

⁸ Տե՛ս, Hedjazi, Y., & Behravan, J. Study of Factors Influencing Research Productivity of Agriculture Faculty Members in Iran. Higher Education, 62(5), 2011, pp. 635-647.

⁹ Տե՛ս, Spaapen, J., Dijkstra, H., & Wamelink, F. Evaluating Research in Context. A Method for Comprehensive Assessment (Second ed.). The Hague: Consultative Committee of Sector Councils for Research and Development, 2007.

¹⁰ Տե՛ս, Bazeley, P. Conceptualizing Research Performance. Studies in Higher Education, 35(8), 2010, pp. 889-903 (<http://www.tandfonline.com/doi/pdf/10.1080/03075070903348404>)

¹¹ Brew, A. Conceptions of research: A Phenomenographic Study. Studies in Higher Education, 26(3), 2001, pp. 271-285.

Robert Khachatryan
Head of the Chair on Education Management and
Planning, Brusov State University
PhD, Associate Professor

SUMMARY

*Key performance indicators of research universities' scientific research
in the context of knowledge-based economy*

One of the mandatory processes for ensuring the efficiency and continuity of scientific research activities of research universities is the regular assessment of scientific-research results and the use of measurable indicators. This needs to be done at different stages of the research process in order to maximize the anticipated outcomes. From this perspective, research universities can develop and define key performance indicators (KPIs). The development and functioning of KPIs is an integral part of the strategic management process of any organization through which governing bodies of universities, including leaders, policy and decision makers can measure and evaluate the achievements and outcomes obtained in targeted areas.

Key words: research universities, scientific research activity, key performance indicators, performance evaluation.

Բնագիրը ներկայացվել է 03.11.2021թ.
Ընդունվել է տպագրության 18.11.2021թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Է. Ղազարյանը